ՈՒՐԱՐՏՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ

(Նյութական մշակույթի ժառանգորդության հարցի շուրջը)

Գ. Ա. ՏԻՐԱՑՅԱՆ

Անցած տասնամյակը Ուրարտուի և հին Հայաստանի հնագիտության համար հատկապես արգասավոր կարելի է համարել։ Կարմիր բլուրի և Արինբերդի պեղումների հաջող ավարտը զուգադիպեց Արդիշտիխինիլիի պեղումների ինտենսիվացմանը, Օշականի ուրարտական նորագյուտ հուշարձանի ուսումնասիրման սկզբնավորմանը։ Թուրքիայում, Արևմտյան Հայաստանի տարածքում, Վանի (Թոփրախ-կալե), Երզնկայի (Ալթըն-թեփե) և Բաղնոցի (Ակնավուր-թեփե) կողքին պեղումներ սկսվեցին Մշո դաշտի Կայալի-դերեում, Վանից հարավ-արևելք ընկած Հայկաբերդում (Զավուշ-թեփե), Ադլջեվազում (Քեֆ-կալեսի)՝ Վանա լճի հյուսիսային ափին, ինչպես նաև Խարբերդի դաշտի ջրասույզ արվող մասում՝ Նորշենի և Աշվանի բլուրներում։ Ուրարտական հուշարձանների պեղումներ ծավալվեցին Իրանի հյուսիս-արևմտյան տարածքում, Հավթավան-թեփեում՝ Ուրմիա լճի մոտ և Բաստամում՝ Մակվից հարավ։

Նոր վերելք ապրեց նաև հին Հայաստանի հնագիտությունը։ Ուսումնասիրվող Արմավիրի ու Գառնիի կողքին սկսվեցին Հայաստանի հելլենիստական դարաշրջանի հռչակավոր մայրաքաղաք Արտաշատի պեղումները։

Այդ ընդհանուր առաջընթացի պայմաններում կուտակվող նոր նյութերը էլ ավելի նպաստավոր պայմաններ ստեղծեցին ընդլայնելու ուրարտա-հայկական մշակութային առնչությունների շրջանակները։ Այսօր կարելի է արդեն խոսել ոչ թե մի[1], այլ մի քանի բնագավառների մասին, որտեղ մշակութային հաջորդակցությունը հաստատվում է ամենայն որոշակիությամբ։

Խոսքը միայն նյութական մշակույթի այնպիսի դասական ճյուղերի մասին չէ, ինչպիսիք են խեցեգործությունն ու մետաղագործությունը, այլ հասարակության կյանքը բնութագրող այնպիսի ուշագրավ ու էական երևույթների մասին, ինչպես՝ քաղաքաշինությունը, ճարտարապետությունը, թաղման ձևերը և այլն։

Քաղաքաշինություն.— *Վաղուց հայտնի է, որ բնակավայրերի ու քաղաքների տեղանքի ընտրության, ամրաշինության հետ կապված մի շարք սկզբունքներ և ընդհանրապես նրանց բաղադրամասերի (բարձունքում տեղադրված միջնաբերդի, նրա ստորոտում, դաշտավայրում փռված բնակավայրի ու որպես կանոն նրա սահմաններից դուրս գտնվող դամբարանադաշտի)*

---

[1] Г. Тирацян, Урарту и Армения (К вопросу о преемственности материальной культуры), *ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1968, № 2։*

գոյությունն ու տարրաղատումը ընդհանուր են եղել ուրարտական և հայկական, ինչպես նաև, հավանաբար, ամեն մի քաղաքաշինության համար։ Այդ ընդհանուր գծերը, սակայն, հեշտությամբ են բացատրվում երկրի բնական պայմանների, ինչպես նաև կառուցողական ֆունկցիոնալ խնդիրների նույնությամբ և աննշան ձևով են շոշափում ժառանգորդության հարցերը քաղաքաշինության ասպարեզում։ Գիտական շրջանառության մեջ մտած նոր նյութերը, սակայն, թույլ են տալիս ավելի համարձակորեն անդրադառնալ ուրարտա-հայկական քաղաքաշինական կապերին, առաջ քաշելով ավելի յուրահատուկ և էական հարցեր։ Այս կապակցությամբ մեծ կարևորություն է ստանում քաղաքի հատակագծման, նրա սկզբունքների ու բնույթի հարցը։ Այսպես, օրինակ, Արտաշատ քաղաքի արտաքին տեսքը Պլուտարքոսին հիմք էր տվել պնդելու, որ այն կառուցված է միասնական հատակագծով։ Արտաշատի միջնաբերդի մեջ մտնող առաջին և ութերորդ բլուրների պեղումները հաստատում են պատմիչի ասածը։ Ութերորդ բլուրում բացվել են իրար զուգահեռ մի քանի փողոցներ[3]։ Այդ դեպքում իբրև օրինակ կարող էր վերցվել հարևան երկրների հելլենիստական պոլիսների հատակագիծը[4], որի հիմքում, ինչպես հայտնի է, ընկած է մ. թ. ա. V դարում ճարտարապետ Հիպոդամոս Միլեթացու մշակած «ցանցի»՝ ուղիղ անկյան տակ հատվող զուգահեռ փողոցների սկզբունքը։

Ճիշտ է, որ ուրարտական պետության խորտակման հետ կործանվեցին նաև ուրարտական քաղաքները, ինչպես այդ երևում է հնագիտական պեղումների արդյունքներից ևս։ Երկրի հյուսիս-արևելքի հայտնի քաղաքների՝ Թեյշեբաինիի և Արգիշտիխինիլիի քաղաքային թաղամասերի պեղումները ակներևորեն արտացոլում են ուրարտական քաղաքային կյանքի անկման իրողությունը։ Հայկական լեռնաշխարհում հետուրարտական ժամանակներում քաղաքային կյանքի հետագիմության պատկերից բացի կան նաև տվյալներ, որոնք մատնանշում են, որ կյանքը շարունակվել է ուրարտական կենտրոններից մի քանիսում (Էրեբունի, Տուշպա-Վան, Արգիշտիխինիլիի արևելյան մաս) և ուրարտական քաղաքաշինության ավանդույթները այստեղ կարող էին գոյատևել։ Այս տեսանկյունից ավելի ուշագրավ են Վանա լճից հյուսիս, Զեռնաքի-թեփե վայրում հայտնաբերված ուրարտական քաղաքի տվյալները, ուղիղ անկյուններով հատվող նրա փողոցները և ուղղանկյուն զանգվածներ կազմող բնակելի թաղամասերը[5]։ Զեռնաքի-թեփեի, ինչպես նաև նման հատակագիծ ունեցող ուրարտական մյուս քաղաքների (Թեյշեբաինի, Անդաֆ՝ Վանից հյուսիս, Դուշգագի՝ Իրանական Ադրբեջանում) օրինակը թույլ է տալիս ավելի հանգամանորեն քննել հին Հայաստանի քաղաքաշինության վրա ուրարտական քաղաքաշինական սկզբունքների հնարավոր ազդեցության հարցը։ Նման պայմաններում բացառված չէ, որ եթե Հայաստանի հելլենիստական դարաշրջանի քաղաքները (հատկապես հները՝ Արմավիրը, Արշամաշա-

---

2 «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», Երևան, 1964, էջ 55։

3 Բ. Ն. Առաքելյան, Հին Արտաշատ, Երևան, 1975, նկ. 6։

4 Г. Х. Саркисян, Тигранакерт, М., 1960, էջ 42։

5 C. Nylander, Remarks on Urartian Acropolis at Zernaki-Tepe, Orientalia Suecana (1965–1966), Uppsala, t. XIV, 1966, նկ. 1։

տը, Երվանդաշատը, Արտաշատը) ունեցել են ցանցաձև հատակագիծ, ապա այն ներշնչվել է ուրարտական քաղաքաշինության սկզբունքներից։

Ճարտարապետություն.— Ծագումնաբանական կապ կարելի է տեսնել ուրարտական և հայկական պալատական կառույցների միջև։

Այսպես, Արգիշտիխինիլիի արևմտյան միջնաբերդում պեղումների ընթացքում բացվել են պալատական մի համալիրի մնացորդներ, որի թվագրումը VIII դարի առաջին կեսով հաստատվում է նրանում գտնված Արգիշտի I-ի արձանագրությամբ։ Պալատի ներքին բաժանումների թիվը երկու տասնյակից ավելի է, բայց ինչպես ցույց են տվել Հ. Մարտիրոսյանը և Կ. Ղաֆադարյանը, նրա հատակագծի հիմքում ընկած է երկարավուն, քառանկյունի սյունազարդ դահլիճը (երկու շարք 10-ական սյուներ), որի շուրջը խմբավորված են նախասենյակներ, սենյակներ ու սրահներ[6]։ Սենյակները դասավորված են դահլիճի ոչ միայն երկարավուն պատերին, այլև նրա նեղ կողմերին կից։

Արգիշտիխինիլիի արևմտյան ամրոցի պալատական համալիրի հատակագծի վերլուծությունը ուսումնասիրողներին հանգեցրեց այն ճիշտ համոզմանը, որ պետք է տարբերակել հանդիսավոր ընդունելությունների, հավաքների ու պաշտոնական արարողությունների համար նախատեսված սյունասրահը և համալիրի հարավային թևը, ննջարանները (հյուսիսային թևը), պաշտոնական ու բնակելի մասից նախասրահով ու միջանցքով մեկուսացված տնտեսական նշանակություն ունեցող սենյակները, պահեստները (պալատի հարավ-արևելյան անկյունում)։ Պալատի կենտրոնական մասը, այդպիսով, նրա սյունազարդ դահլիճն է կազմում, ուր կարելի էր անցնել նախասրահի միջով։

Նման պալատական համալիր է բացվել Ռուսախինիլիում (Բաստամ)՝ Մակվից ոչ հեռու։ Այն, տարբեր հատակագծային լուծում ստանալով, պահպանել է իր մեջ սյունազարդ դահլիճի նշանակությունը (երկու շարք 7-ական սյուն)[7]։

Ուրարտական պալատական ճարտարապետության նյութերը ճարտարապետ Կորյուն Ղաֆադարյանին հնարավորություն ընձեռեցին կամուրջ գցելու դեպի վաղ միջնադարյան հայկական նույնատիպ կառույցները, Դվինի ու Արուճի կաթողիկոսական պալատները[8]։

Այդ կառույցների հատակագծերի հետ մոտիկից ծանոթանալիս ոչ մի կասկած չի մնում ուրարտական պալատական համալիրների հետ նրանց ունեցած ծագումնաբանական կապի վերաբերյալ։ Դվինում և Արուճում, Արգիշտիխինիլիի նմանությամբ, պալատի կենտրոնական մասը կազմում է սյունազարդ դահլիճը (2 շարք 3 կամ 4-ական սյուներ), որի երկար կողմերում դասավորված են տարբեր նշանակության սենյակները։ Ընդ որում, հետաքրքիրն այն է, որ ուրարտական նորագյուտ նյութը կարծես թույլ է տալիս լու-

---

6 А. А. Мартиросян, Аргиштихинили, Ереван, 1974, էջ 79, նկ. 30։ К. К. Кафадарян, Архитектура города Аргиштихинили (автореферат кандидатской диссертации), Ереван, 1975, էջ 17—20, նկ. 6։

7 W. Kleiss, Urartäische Architektur, Urartu, Ein wiederentdeckter Rivale Assyriens, München, 1976, նկ. 20։

8 К. К. Кафадарян, նշվ. աշխ., էջ 31։

ծելու կաթողիկոսարանների կենտրոնական, սյունազարդ մասը դահլիճ թե բակ լինելու վեճը՝ հօգուտ առաջինի[9]։

Ուրարտական և հայկական հիշյալ հուշարձանների միջև նկատվող նմանությունը ո՛չ ֆորմալ և ո՛չ էլ պատահական կարելի է համարել, թեպետ խիստ հետաքրքրական և կարևոր կլիներ գտնել միջանկյալ օղակները, որոնք, ըստ մեր խորին համոզման, պետք է պահպանված լինեն Հայաստանի դեռևս չպեղված անտիկ հուշարձաններում[10]։ Այնուամենայնիվ, նորագույն նյութերը թույլ են տալիս մեկ-երկու դարով կրճատել նույնատիպ հուշարձանների ուրարտական և հայկական խմբերի միջև գոյություն ունեցող գրեթե 1400-ամյա ժամանակագրական խզումը։ Խոսքը կաթողիկոսական նորագյուտ պալատի մասին է, որը վերջին տարիներին բացվում է նույն Դվինում, արշավախմբի պետ Արամ Քալանթարյանի ջանքերով։ Պալատական շենքի մնացորդները իրավացիորեն թվագրվում են V դարով, այսինքն ավելի վաղ շրջանի են, քան Դվինի և Արուճի մինչև օրս հայտնի կաթողիկոսարանները, և դրանով ժամանակագրորեն քիչ ավելի մոտ են ուրարտական նախատիպերին։ Պակաս ուշագրավ չէ այն հանգամանքը, որ իր հատակագծային առանձնահատկություններով Դվինի վաղ պալատը ավելի մոտ է Արգիշտիխինիլիի պալատին։ Սրա նմանությամբ Դվինի նորագյուտ համալիրն ունի սենյակներ, սրահներ կամ նախասրահներ սյունազարդ դահլիճի նեղ կողմերից ևս, մի բան, որից զուրկ են Դվինի և Արուճի հայտնի հուշարձանները։

Այժմ անդրադառնանք ուրարտական և հայկական պաշտամունքային կառույցների միջև գոյություն ունեցող ծագումնաբանական հնարավոր կապին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ մի այլ բնագավառում ճարտարապետական ավանդույթները այնքան կենսունակ չեն, ինչքան տաճարային, պաշտամունքային ձևերում։

Ուրարտական տաճարների հիմնական տիպերը հայտնի են[11]։ Առաջին տիպը բացված է Արինբերդում։ Տաճարը, որ ձոնված է Խալդի աստծուն, բաղկացած է գլխավոր երկարավուն դահլիճից՝ առջևից սյունազարդ մուտքով (պորտիկով), կողքերից տեղադրված են սենյակներ՝ հաճախ աշտարակաձև։ Այն հիշեցնում է խուրրի-միտանիական միջավայրում հանդիպող Բիտ-Հիլանի անվանված կառույցները։

Երկրորդ տիպը քառակուսի հատակագիծ ունեցող, անկյունավոր ելուստներով շենքն է, ներսում փոքր աղոթասրահով։ Նման տիպը ներկայացված է բազմաթիվ օրինակներով (Թոփրախ-կալե, Ալթըն-թեփե, Կայալի-դերե, Բաղնոց, Հայկաբերդ, այժմ Ջավուշ-թեփե և այլն)։

---

9 Նույն տեղում։ Տե՛ս նաև Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, էջ 58—60, 66—67, նկ. 13։

10 Ճարտարապետ Վ. Հարությունյանը որոշ նմանություն է տեսնում վաղ միջնադարյան հիշյալ կառույցների և աքեմենյան Իրանի մայրաքաղաք Պասարգադքի պալատական շենքի միջև (Վ. Հարությունյան, Դվինի VI—VII դարերի ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950, էջ 78—79)։ Հաշվի առնելով աքեմենյան մի շարք հուշարձանների կախումը ուրարտական ճարտարապետությունից, կարելի կլիներ այդ շենքի մեջ տեսնել մի միջանկյալ օղակ Արուճի և Դվինի պալատների համար, եթե զուգահեռը ֆորմալ չթվար, քանի որ Պասարգադքի հիշյալ շենքի կենտրոնական սյունազարդ դահլիճը շրջապատված է ոչ թե սենյակներով, ինչպես Հայկական լեռնաշխարհի հուշարձաններում է, այլ սյունաշարերով։

11 К. Л. Оганесян, Архитектура Урарту (автореферат докторской диссертации), Л., 1966, էջ 22—23։

Երրորդ տիպը Սուսի կոչված տաճարն է, բացված Արինբերդում։ Այն քառանկյունի փոքր սենյակ է։

Չորրորդ տիպը պատկերված է ասորեստանյան բարձրաքանդակի վրա։ Դա Մուսասիրի հռչակավոր տաճարն է, բարձր հարթակի վրա, երկթեք ծածկով, եռանկյունով և ճակտոնով, առջևից սյուներով։

Հին հայկական տաճարների մասին մեր դիտելիքները շատ ավելի համեստ են և, որ կարևորն է, ենթադրական։ Գրավոր աղբյուրներից և վաղ քրիստոնեական բազիլիկ եկեղեցիների ուսումնասիրությունից հայտնի են քառանկյունի հատակագիծ ունեցող հեթանոսական կառույցները[12]։ Սրանք, ամենայն հավանականությամբ, տաճարների տեղական տիպն են ներկայացնում, որ ֆորմալ տեսակետից կարելի կլիներ կապել ուրարտական Սուսի տաճարների հետ։

Մի այլ տարբերակ հավանաբար տիպաբանական առնչություններ ուներ իրանական, պարթևական պաշտամունքային կառույցների հետ, նման Արեվելյան Վրաստանում, Դեդոբլիս Մինդորի կոչված վայրում բացված տաճարին։ Հայաստանում այդպիսին կարող էր լինել Արտաշատի Անահիտի տաճարը, փայտե ծածկով։

Հին հայկական տաճարների վերջին տիպը հունական է կամ հունա-հռոմեական, ինչպիսին Գառնիի տաճարն է։ Դատելով Վաղարշապատում և Բագարանում պահպանված ճարտարապետական մանրամասներից, նման տիպի տաճարներ կարող էին գոյություն ունեցած լինել նաև այս վայրերում։

Տարօրինակ է, բայց փաստ է, որ հատկապես այս տիպի տաճարների ուսումնասիրության կապակցությամբ է առաջ քաշվել ուրարտական և հայկական ճարտարապետական կառույցների միջև գոյություն ունեցող ծագումնաբանական կապի հարցը։

Դեռևս 1944 թ. Բ. Բ. Պիոտրովսկին գեղեցիկ ձևակերպումով այն գայթակղեցուցիչ միտքն է հայտնել, որ IX դարով թվագրվող Մուսասիրի ուրարտական տաճարի կերպարը հունական տաճարաշինությանը նախորդող անհայտ նոր էջեր է բացում[13]. Կ. Վ. Տրևերը այս միտքը փաստորեն իր տրամաբանական վախճանին հասցրեց, ծագումնաբանական հավանական կապ տեսնելով Մուսասիրի տաճարի, հունական տաճարների ու նաև Գառնիի հեթանոսական տաճարի միջև[14]։

---

12 Ա. Սահինյան, Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, Երևան, 1955, էջ 231։

13 Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, էջ 253։

14 К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953, էջ 70, 73—74, 75։ Վերջին տարիներին բացված ուրարտական մի շարք տաճարների շենքերը, թվում է, թե հերքում են նման հարցադրումը և այս կապակցությամբ կուզենայինք անդրադառնալ Մուսասիրի տաճարի վերակազմության սկզբունքորեն մի նոր փորձին, որի հեղինակը Իրանի Բաստամ հնավայրի պեղումների ղեկավար Վ. Կլայսն է (W. Kleiss, Zur Rekonstruktion des urartaischen Tempels, „Istanbuler Mitteilungen", № 13—14, 1963—1964)։ Քառակուսի հատակագծով, անկյունային ելուստներով տաճարների համեմատական առատությունը նրան թույլ է տալիս Մուսասիրի տաճարի մեջ տեսնելու նույնատիպ շենք, որի պատերը, անկյունային ելուստներից բացի, հարդարված են նաև չորս այլ ելուստ-կոնտրֆորսներով, որոնք մինչև այժմ դիտվել են որպես սյուներ կամ ինչ-որ անհասկանալի որմնամույթեր։ Ըստ այդ նույն վերակազմության, քառակուսի հատակագծով տաճարների այս խումբը ունեցել է

Անկախ այն բանից, թե կարելի՞ է արդյոք Գառնիի տաճարը այդքան հեռավոր ու ենթադրյալ նախատիպի հետ կապել թե ոչ, այժմ ավելի քան հավանական է, որ Հայաստանի հյուսիս-արևելքում, Աստղիբլուրում գտնված մ. թ. ա. VI—V դդ. թվագրվող տաճարի կավե մոդելի երկթեք ծածկի գոյության փաստը[15] հնարավոր է բացատրել ոչ միայն հարևան երկրների՝ Իրանի ու Փոքր Ասիայի ճարտարապետական նույնատիպ լուծումների ազդեցությամբ, այլ վաղուց ի վեր Հայկական լեռնաշխարհում հայտնի Մուսասիրի տաճարի և նրան նման այլ շենքերի առկայությամբ։

Ուրարտա-հայկական մշակութային կապերը հնարավոր է որոնել ու բացահայտել ոչ միայն պալատական ու տաճարային կառույցների, այլև բնակարանային ճարտարապետության մեջ։ Մ. թ. ա. V—IV դդ. սահմանագլխին Հայաստանի միջով անցնող հույն պատմիչ Քսենոփոնը երկրի հարավում հանդիպած հայկական առաջին գյուղում տեսնում է աշտարակներով բնակելի տներ («Անաբասիս», IV, 4, 2)։ Աշտարակաձև տներ Քսենոփոնը հանդիպում է նաև Հայաստանի հյուսիսում՝ Պոնտական լեռներում, մոսինոյկների երկրում («Անաբասիս», V, 4, 26)։ Այս առանձնահատկությունը բացատրվում է, ըստ երևույթին, պաշտպանողական նկատառումներով։ Նույն աքեմենյան ժամանակաշրջանի աշտարակաձև տներ հանդիպում են և այլուր, օրինակ, Փոքր Ասիայի արևմտյան մասում, որոնց գոյությունը հավաստում է Քսենոփոնը իր «Հունական պատմություն» աշխատության մեջ։ Ինչ վերաբերում է Հայաստանի տարածքում վկայված նման տների կառուցվածքային ակունքներին, ապա դրանք պետք է փնտրել ուրարտական ճարտարապետության մեջ, որը քաջ ծանոթ էր աշտարակաձև շենքերին։ Ուրարտական ճարտարապետությանը հայտնի է աշտարակաձև շինությունների մի քանի տարբերակ, որոնց ծագումնաբանական նշանակությունը Առաջավոր Ասիայի մի շարք երկրների, Իրանի, Հայաստանի նմանօրինակ կառույցների համար շատ մեծ է[16]։

Կարմիր բլուրում և Ադյնաղում (Քեֆ-կալեսի) հանդիպող ելուստավոր անկյուններով բազալտե աշտարակները ունեն կառուցողական նշանակություն և որպես մույթեր կրել են երկրորդ հարկը։ Աշտարակաձև շինությունների պաշտամունքային տարբերակը ներկայացված է ուրարտական տաճարների մի մեծ խմբով (Թոփրախ-կալե, Ալթըն-թեփե, Ազնավուր-թեփե, Զավուշ-թեփե, Կայալի-դերե)։ Ըստ հատակագծի նշված տաճարները կազմում են քառակուսիներ, պատի արտաքին երեսից դուրս ցցվող ելուստավոր անկյուններով, որոնք նրան հաղորդում են աշտարակաձև բնույթ։ Ի վերջո, աշտարակաձև կառույցների մի առանձին տարբերակ են կազմում Հայաս-

---

վրանաձև ծածկ, որի մի եռանկյունաձև հատվածը Մուսասիրի տաճարը պատկերող բարձրաքանդակի վրա ներկայացված է ուղղված, ուղղահայաց վիճակում, որի հետևանքով այն դիտվում է որպես ճակտոն։ Սակայն հետագայում Վ. Կլայսը մասամբ վերանայեց իր տեսակետը (W. Kleiss, Urartäische Architektur, Urartu, Ein wiederentdeckter Rivale Assyriens, էջ 41)։

15 С. А. Есаян, Астхиблурский могильник, *ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1968, № 6, տախտ. IX։*

16 Գ. Ա. Տիրացյան, *Ուրարտական քաղաքակրթությունը և Աքեմենյան Իրանը, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2, էջ 153—155։* D. Stronach, Urartian and Achaemenian Tower Temples, „Journal of Near Eastern Studies", 1967, vol. 26, № 4.

տանի պատմական թանգարանում պահվող, Կարմիր բլուրից գտնված աշտարակի ոսկրե մոդելը և Բրիտանական թանգարանում պահվող աշտարակի բրոնզե մոդելը, որոնք պատկերված են ելուստավոր անկյուններով[17]։ Ուրարտական ճարտարապետության մեջ ձևավորվել էր աշտարակաձև շենքի կայուն մի տիպ, բնորոշ հատակագծով։ Սրա նախնական, չավարտված ձևը պետք է համարել ուրարտական քաղաքների և ամրոցների պարսպապատերի սիստեմի մեջ մտնող աշտարակները, որոնք ունեն պաշտպանողական բնույթ, թեև արտաքին հարթությունները զուրկ չեն որոշ դեկորատիվությունից։ Աշտարակաձև շինությունը պարսպապատից առանձնացած, բայց ամրության խորհրդանշան կրող ինքնուրույն մի միավոր է։ Ինքնուրույնացման այս պրոցեսին օժանդակում է այն հանգամանքը, որ ի բնե աշտարակը յուրահատուկ տեղ է գրավում պարսպի ճարտարապետության մեջ։ Եթե աշտարակը համատարած շարվածք չէ, ապա այն օժտված է ծածկով, ունի պատուհաններ, իսկ ներսում՝ սենյակներ, մի խոսքով, գտնվում է թեկուզև ամրացված, բայց ինքնուրույն շենքի վերածվելու ճանապարհին։ Այդ պատճառով հնարավոր է, որ ուրարտական աշտարակների՝ բրոնզից և ոսկրից պատրաստված մոդելները պատկերում են նաև ինքնուրույն ամրացված շինություններ։ Այդ դեպքում սրանք բնակելի շենքեր են, Քսենոփոնի հիշատակած հին հայկական շենքերի նախատիպերը։

Շինարարական տեխնիկա.— Հայտնի է, որ հին Հայաստանում քաղաքների ու ամրոցների պարիսպների ու նրանցում բացված շենքերի քարերը, նրանց արտաքին երեսները հաճախ մշակվում էին հատուկ ձևով. հարթեցվում էին քարերի եզրերը, իսկ միջին մասը կիսամշակված վիճակում էր թողնվում, որով ստացվում էր դեկորատիվ որոշ էֆեկտ։

Քարի մշակման այս եղանակը, շատ տարածված լինելով հելլենիստական աշխարհում, հանդիպում է նաև աքեմենյան հուշարձաններում։ Այն առաջացել է հոնիական-լիդիական միջավայրում, որտեղ պահպանվել են մ. թ. ա. VI դարի հոյակապ նմուշներ[18]։ Նման պայմաններում բացառված չէ, որ շինարարական արվեստի այս առանձնահատկությունը մուտք է գործել Հայաստան հարևան երկրներից, քարերը իրար միացնող ամրակապերի հետ մեկտեղ[19]։ Սակայն այս եղանակով մշակված քարերի առկայությունը Ուրարտուում ստիպում է զգալի չափով վերանայել հելլենիստական շինարարական տեխնիկայի՝ որպես ազդեցության միակ աղբյուրի մասին կարծիքը։ Եզրերը հանած քարեր հանդիպում են ուրարտական բազմաթիվ հուշարձաններում, ընդ որում, ինչպես ցույց է տվել Մ. Վ. Նիկոլսկին, կան այդպիսի քարեր ուրարտական արձանագրությամբ[20]։ Այդօրինակ քարերից են կառուցված Խալդիի տաճարի հարթակը Թոփրախ-կալեում, Արմավիրի ամրոցի հյուսիսային պարսպի մի ընդարձակ հատվածն ու բլրի գագաթին տեղադրված պաշ-

---

17 Б. Б. Пиотровский, Искусство Урарту, Л., 1962, նկ. 55, 56։

18 C. Nylander, Ionians in Pasargadae, Uppsala, 1970, նկ. 24—27։

19 Г. А. Тирацян, Новые археологические материалы послеурартского времени на территории Западной Армении (Турция) и их место в истории древнеармянской культуры, «Древний Восток», 2, Ереван, 1976, էջ 149։

20 Б. Б. Пиотровский, История и культура Урарту, էջ 74։

տամունքային շենքի հարթակի հարավային կողմը։ Նույնատիպ քարեր հանդիպում են նաև Օշականի և Դովրիի ուրարտական հուշարձաններում։

Այս տվյալների ճնշման տակ պետք է համաձայնվել այն մտքի հետ, որ Արինբերդի աքեմենյան ժամանակաշրջանի սյունազարդ դահլիճի՝ եզրերը հանած քարերը մշակված են ուրարտական ավանդույթների համաձայն[21], որոնք, հավանաբար, իրենց զգացնել են տալիս նաև Գառնիի մ. թ. ա. II—I և մ. թ. I դդ. պարսպի վեմերում։

Շինարարական գործունեության համար պակաս կարևոր չեն նրա ընթացքում կիրառվող երկարության չափերը։ Ճարտարապետ Ա. Սիվկովին հաջողվեց ցույց տալ, որ ուրարտական չափի միավորը կանգունն էր (0,518 մ), որն այնուհետև անցել էր հայերին. այսօր հաստատված է, որ հին հայկական ճարտարապետական հուշարձանների երկարության հիմնական չափերից մեկը կանգունն է[22]։

Ուրարտուն և Կոմմագենե երկիրը.— Կոմմագենե երկրի պատմությունն ու մշակույթը ուսումնասիրողները ուշադրություն են դարձրել նրա հինարևելյան ակունքների վրա, շեշտը դնելով, բնականաբար, խեթական ասպեկտի վրա։ Այդ երկրի տարածքում վերջին տարիներին կատարված ուսումնասիրությունները որոշ չափով փոխում են այդ պատկերացումները։

Ծոփքի ու Կոմմագենեի միացյալ պետության թագավոր Արշամի կողմից մ. թ. ա. III դարի կեսերին հիմնադրված Արսամեա քաղաքի պեղումները թույլ են տալիս վեր հանել ուրարտական ազդեցության հետքերը Կոմմագենեի հելլենիստական ժամանակաշրջանի մշակույթում[23]։ Այդ պեղումների ընթացքում բացվեցին կոմմագենյան երկրամասի նյութական մշակույթին բնորոշ աստիճանավոր պատվանդաններով կառույցներ՝ պատկերազարդ կոթողներով հանդերձ։ Սրանք, ինչպես ճիշտ կռահել են պեղումների ղեկավարները, առնչվում են ուրարտական՝ արձանագրություն կրող կամ անարձանագիր կոթողների հետ, որոնք կանգնեցված էին հատուկ քարե պատվանդանների վրա կամ, որ ավելի հետաքրքիր է, ագուցված էին բնական ժայռերում փորված բնի մեջ։ Հավանական է, որ հելլենիստական դարաշրջանի այսպիսի կոթողները, որոնց գոյության մասին Հայաստանում ևս պահպանվել են որոշ ակնարկներ, ընկած են քրիստոնեության մուտքից հետո նույն Հայաստանում տարածում գտած քառակող կոթողների ձևավորման հիմքում։ Ուրարտական ազդեցության արգասիք են նաև Արսամեայի Էսքի-կալե կոչվող բլրի լանջին հայտնաբերված ժայռափոր կառույցները. մոնումենտալ մուտք՝ վերևի մասը կամարաձև, ստորերկրյա սենյակ՝ թաղաձև ծածկով։ Լանջերի ամրացման, ժայռափոր աստիճանավոր հիմքերի վրա կառուցված հենապատերի օգնությամբ օգտակար տարածությունների ընդլայնման, ընդհանրապես ժայռի մշակման՝ նրա մակերեսին և խորքին հավասարապես տիրապետելու տեխ-

21 К. Л. Оганесян, Архитектура Эребуни, I, Ереван, 1961, էջ 109։

22 А. В. Сивков, Об основных линейных мерах Урарту и древней Армении, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1944, № 1—2, էջ 83—88։ Ա. Սահինյան, նշվ. աշխ., էջ 16։

23 F. Dörner, Th. Goell, Arsameia am Nymphaios, Berlin, 1963, էջ 109, 122, 301 և մեր գրախոսականը՝ «Հելլենիստական նոր կենտրոն Կոմմագենե երկրում», ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1969, № 3։

նիկան իր ակունքներով հասնում է ուրարտական քաղաքակրթության հանրահայտ առանձնահատկություններին։

Տարազ.— Ուրարտա-հայկական ազգակցական կապերի մասին որոշ տվյալներ կան տարազի բնագավառում։ Աշուրբանիպալ թագավորի Նինվեի պալատի բարձրաքանդակների վրա պատկերված են ուրարտական դեսպանները, որոնց գալու մասին ասված է ատորեստանյան տարեգրություններում։ Նրանց գլուխներին դրված են թաղիքե փափուկ գլխարկներ, հետևից կախովի ժապավեններով։ Ռ. Դ. Բարնետի կարծիքով դրանք հիշեցնում են Պերսեպոլիսի բարձրաքանդակներում պատկերված հայ պատվիրակների գլխարկների ձևերը[24]։ Թեև այս համադրությունը հենվում է ավելի ձևական թվացող նմանության վրա, սակայն զուրկ չէ որոշ հետաքրքրությունից. կապված լինելով ուրարտական և հայկական աղնվականության տարազի հարցերի հետ, այն թույլ է տալիս անդրադառնալ նաև մ. թ. ա. VI դարի հայ թագավորների թագի ձևին, նրա արտաքին կերպարին։ Այստեղ մեզ պետք է օգնի մի պատմական զուգահեռ, որի էությունն այն է, որ մարերի թագավորը, հաղթելով ասորեստանցիներին ու իրեն նրանց ժառանգորդը համարելով, յուրացրեց Ասորեստանի թագավորի թագի ձևը։ Եթե ճիշտ է Բարնետը, որ այսպես կոչված Օքնուսի կամ Ամու-Դարիայի գանձի ոսկյա պատյանի վրա պատկերված է Մարաստանի Աստիագես թագավորը որս անելիս[25], ապա վերևում ասվածը պետք է իր հաստատումը գտնի։ Նրա գլխին երևացող թագը հար ու նման է Ասորեստանի թագավորների կրած թագին։

Այս պարագայում բացառված չէ, և գուցե հավանական է, որ Հայկական լեռնաշխարհում ուրարտական թագավորներին փոխարինած հայ թագավորները պետք է փոխառնեին հինարևելյան տիպի, հատած կոնի ձև ունեցող նրանց թագերը[26]։

Թաղման ձևեր.— Նյութական մշակույթի հետաքրքիր բնագավառ են կազմում դամբարանները, նրանց տեսակներն ու ձևերը, կառուցվածքային առանձնահատկությունները, որոնք իրենց ուղեկցող թաղման ծեսերի ու արարողությունների, հավատալիքների ու անդրշիրիմյան կյանքի մասին պատկերացումների գոյության փաստով անխուսափելիորեն ներգրավվում են նաև ժողովրդի հոգևոր մշակույթի ոլորտը։

Հայաստանի հելլենիստական դարաշրջանի թաղման դասական ձևեր են համարվում, ի թիվս այլոց, կարասային թաղումները և սարկոֆագները, ընդ որում երկու տեսակներն էլ, վերջին հաշվով, համարվում էին օտարամուտ։

Ուրարտական հուշարձաններում վերջին տարիներին կատարած պեղումները թույլ են տալիս ավելի ճիշտ որոշելու թաղման այդ տեսակների ակունքները։

Վաղագույն կարասային թաղումները Հայաստանում թվագրվում են մ. թ. ա. IV—III դդ.։ Ալեքսանդր Մակեդոնացու դրամները և վաղ հելլենիստական նյութերը հավանական են դարձնում նման թվագրումը[27]։ Գոյատևե-

---

[24] R. D. Barnett, Persepolis, Iraq, XIX, I, 1957, էջ 67։ Б. Б. Пиотровский, Искусство Урарту, էջ 40, նկ. 9։

[25] R. D. Barnett, Median Art, Iranica antiqua, VIII, 1968, աղ. VI, էջ 38։

[26] Б. Б. Пиотровский, Искусство Урарту, նկ. 65։

[27] Ж. Д. Хачатрян, Гарни V, Ереван, 1976, էջ 23 և հտ.։

լով ամբողջ հելլենիստական շրջանում, կարասային թաղումները շարունակվում են Հայաստանում և հարևան երկրներում նաև մ. թ. առաջին դարերում[28]։ Թաղման նպատակով օգտագործվող կարասները ուռուցիկ կամ երկարավուն իրան ունեն և տարբերվում են իրարից նաև հատակի կառուցվածքով (հարթ կամ սրածայր)։ Թաղման այս ձևի տարածման սկզբնական փուլերում օգտագործվում էին տնտեսության մեջ կիրառություն դտած կավանոթները։ Հետագայում ծիսական նպատակների համար սկսեցին պատրաստել հատուկ կարասներ[29]։

Կարասային թաղումների ծագման հարցում մինչև վերջերս պարզություն չկար։ Ոմանք այն կապում էին Կողբիսի կամ Վիրքի ու Աղվանքի տարածքների հետ։ Պեղումները Արգիշտիխինիլիում պարզեցին, որ կարասային թաղումները Հայաստանում սկիզբ են առնում առնվազն ուրարտական ժամանակաշրջանում։ Արգիշտիխինիլիում ուրարտական կարասային թաղումները՝ դիակիզման աճյունասափորների հետ միասին, պեղվել են ամրոցից դեպի արևմուտք ու հյուսիս-արևմուտք ձգվող տարածքում ու Նոր Արմավիր գյուղի հարավ-արևմտյան ծայրամասում, ստուգված շերտագրական միջավայրում[30]։ Դրանք պատկանում են քաղաքի հնագույն, Արգիշտի I-ի օրոք հիմնադրված գերեզմանոցին։ Ավելի ուշ՝ Սարդուր II-ի օրոք, այն կառուցապատվել է ընդարձակվող քաղաքի արևմտյան թաղամասով, նրա տներով։ Թաղման կարասները միջին ու մեծ չափերի են, նրանցից մեկը հարդարված է ուրարտական գինու կարասներին բնորոշ պարանաձև գոտիով։ Կարասները պառկած կամ ուղղահայաց վիճակում են թաղվել։ Նրանց մեջ գտնված կմախքները վատ են պահպանված, ի տարբերություն ուղեկցող իրերի, առաջին հերթին կավանոթների, որոնք առանց տարակուսանքի թվագրվում են մ. թ. ա. VIII դարով։ Կարասներից մեկի բերանը փակված էր կավե թասով, մի երևույթ, որը տարածում գտավ անտիկ ժամանակաշրջանի կարասային թաղումներում։

Արգիշտիխինիլիի դամբարանադաշտը պատկանում է աղքատ, համեստ ունեցվածքի տեր բնակչությանը։ Մոտավորապես նույն սոցիալական խավին են պատկանում և անտիկ դարաշրջանի կարասային թաղումները։ Այս հանգամանքը ուշագրավ է այն տեսակետից, որ մշակութային հաջորդակցության ընթացքը՝ ուրարտականից հայկական, լուսաբանվում է նաև հասարակության ստորին խավերի մշակույթի օրինակով։

Թաղման ձևերի ու տեսակների փոխանցման մասին են վկայում նաև սարկոֆագները՝ քարե ու կավե։ Այսօր բավական վստահորեն կարելի է պնդել, որ անտիկ Հայաստանի նման թաղումներն իրենց սկիզբն են առնում ուրարտական ժամանակաշրջանում։ Վանի ժայռափոր տապանատուն համարվող սենյակներում ննջեցյալները, հավանաբար, դրված են եղել սարկոֆագների մեջ. այդ սարկոֆագները, սակայն, մեզ չեն հասել[31]։

Անտիկ Հայաստանում քարե սարկոֆագներ են վկայված Գեղադիրում, Գառնիում և այլուր։ Սրանք պատրաստված են տուֆից, ունեն երկարավուն

---

28 Б. Н. Аракелян, Гарни II, Ереван, 1957, նկ. 22։
29 Նույն տեղում, էջ 21։
30 А. А. Мартиросян, Аргиштихинили, էջ 50—53, նկ. 15։
31 Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, էջ 216, 218։

քառանկյան ձև և ծածկված են եղել ամբողջական սալով[32]։ Ինչքան էլ ծանրակշիռ թվա նրանց ազգակցական կապը անտիկ աշխարհի քարե սարկոֆագների հետ, չի կարելի զանց առնել այն կարևոր հանգամանքը, որ ուրարտական մշակույթը ծանոթ է եղել թաղման նման ձևերին։ 1973 թ. Նոր Արմավիր գյուղի տներից մեկի բակում գտնվեց քարե մի սարկոֆագ, որն անկասկած պատկանում է Արգիշտիխինիլիի գերեզմանոցին (Հ. Մարտիրոսյանի պեղումները)։ Սարկոֆագի ժամանակագրական կողմը ապահովված է թվում։ Նրա մեջ գտնված հանգուցյալի աճյունը ամփոփող կարմիր փայլեցրած կավանոթները բացահայտորեն ուրարտական կերպար ունեն։ Արգիշտիխինիլիի սարկոֆագը բավական տարողունակ է (երկարությունը՝ 1,40 մ, լայնքը՝ 0,60 մ), ծածկված է եղել երկու բարակ սալերով։

Կավե սարկոֆագները, հատկապես դագաղանմանները, լայն տարածում գտան Հայաստանում մ. թ. III—IV դդ. (Վաղարշապատում, Արտաշատում և այլուր)։ Պատահական չէ, որ նրանք հայտնի են «պարթևական դագաղներ» անվան տակ, քանի որ նրանց տարածման ժամանակաշրջանը համընկնում է նախ և առաջ պարթևական ժամանակաշրջանի հետ, իսկ արեալը՝ պարթևական պետության արևմտյան նահանգների, առաջին հերթին Միջագետքի հետ։ Այս թաղումների մշակութային կողմնորոշումը կասկած չի հարուցում։ Վերջերս Սիսիանի իշխանական դամբարանում գտնվեց կավե դագաղ, որը դամբարանի մյուս նյութերի օգնությամբ թվագրվում է մ. թ. ա. I դարով։ Դագաղը, որն իր ձևով տարբերվում է վերևում հիշատակվածներից, ավելի կարճ է ու շատ ավելի բարձր պատերով՝ դրսից հարդարված երեք ռելիեֆ գոտիներով[33]։ Թաղման այս տեսակը ծագումնաբանական նոր լուծում էր պահանջում։ Այդ լուծումն իրեն սպասել չտվեց։

1974 թ. Օշականում ուշ ուրարտական № 25 դամբարանում գտնվեցին կավե սարկոֆագի բեկորներ, որը հաջողվեց լիովին վերականգնել։ Այն եռանկյունաձև է, կլորացող անկյուններով և բարձր, վերևում քիչ լայնացող կողերով, դրսից հարդարված ուռուցիկ գոտիով[34]։ Սա ուրարտական կավե սարկոֆագների առաջին օրինակն է։

Խեցեգործություն.— Սա նյութական մշակույթի այն բնագավառն է, որտեղ ուրարտա-հայկական մշակութային առնչությունները առավել ցայտուն են երևան գալիս։ Խոսքը միայն երկրորդական հատկանիշների ու մանրամասների ընդհանրության մասին չէ (սափորների եռաթերթաձև շուրթը, իրանին վզի անցումը ընդգծող ռելիեֆ գոտին, անոթների արտաքին կարմիր գույնը, տեխնիկական տարբեր հնարներ ու հարդարման տարրեր)[35]։ Խոսքը

---

32 Ժ. Խաչատրյան, Հնագիտական հայտնագործություններ Գեղադիրում, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1966, № 1, էջ 83, նկ. 1։

33 Ժ. Խաչատրյան, Դիակիզումը Հայաստանում (մ. թ. ա. II—մ. թ. III դդ.), ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1975, № 2, էջ 57—58։

34 С. Есаян, Л. Калантарян, Позднеурартское погребение Ошаканского могильника, «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 3, էջ 269։

35 Ի. Կարապետյան, Մ. թ. ա. V—III դարերի վաղ հայկական թասերի մի խումբ, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 3, էջ 279։ Նույնի՝ Նորաշենի վաղ հայկական ամրոցը, «Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 2, էջ 283։ Ժ. Խաչատրյան, Հնագիտական հայտնագործություններ Գեղադիրում, էջ 88։

Նախ և առաջ կավանոթների՝ տիպաբանորեն հստակ բնութագրվող կայուն, առաջատար ձևերի մասին է։

Այժմ համառոտակիորեն ծանոթանանք հիմնական ձևերի հետ։ Հայաստանի վաղ հայկական և հելլենիստական դարաշրջանի խեցեղենի մեջ առանձին խումբ են կազմում կորագիծ հատակով, ընդգծված անցումով և դեպի վեր լայնացող բարձր շուրթերով անոթները։ Կավե այս ըմպանակները ճշգրիտ զուգահեռներ ունեն աքեմենյան Իրանի խեցեգործության մեջ։ Այս նմանությունը օրինաչափ պետք է համարել, հաշվի առնելով ժամանակագրական ընդհանուր սահմանները, ինչպես նաև Հայաստանի ու Իրանի միջև գոյություն ունեցող մշակութային աշխույժ կապերը։ Սակայն, մեր կարծիքով, այս հանգամանքը չի կարող բավարար կերպով բացատրել վաղ հայկական և հելլենիստական ըմպանակների ծագումը, ակունքները։ Ուրարտական նյութի ներգրավման եղանակով հնարավոր է բացահայտել այս ձևի հինարևելյան՝ ասորեստանյան, ուրարտական ակունքները։ Նույնպիսի կարմիր փայլեցրած ըմպանակներ, թասեր կամ փոքր պնակներ, կլորացող կամ փոքրինչ հարթ հատակով, բնորոշ անցումով և պրոֆիլավորված կամ լայնացող պսակով, հանդիպում են ուրարտական հուշարձաններում (Կարմիր բլուրում, Արինբերդում, Արգիշտիխինիլիում)։

Հայաստանի հելլենիստական դարաշրջանի խեցեղենի բնորոշ, լայն տարածում գտած մի այլ ձև են կազմում կիսագնդաձև կամ կիսաձվաձև խոր թասերը կամ գավաթները։ Նրանք հանդես են գալիս անզարդ, թեթևակիորեն փայլեցրած մակերեսով, կամ զունազարդ օրինակներով։ Այս թասերը մեծ թվով հանդիպում են Արմավիրի մ. թ. ա. III—I դդ. շերտում, բայց վկայված են նաև Արտաշատում, Գառնիում, Արագածի հարավային փեշերի հուշարձաններում։ Դեռևս Բ. Կուֆտինն է ուշադրություն դարձրել հելլենիստական աշխարհի հետ այս թասերի ունեցած առնչությունների վրա։ Այդ առնչությունների օրինակները հնարավոր է բազմապատկել[36]։ Սակայն Արգիշտիխինիլիի պեղումներից վերջերս հայտնի դարձած ուրարտական կիսագնդաձև, կարմիր փայլեցրած կամ հասարակ թասերի ծագումնաբանական աղերսը դարաշրջանի նույնատիպ թասերի հետ անկասկած է թվում[37]։

Հայաստանի մ. թ. ա. V—IV դդ. դամբարաններում հանդիպում են փոքր գնդաձև կճուճներից կազմված զույգ անոթներ, պայմանականորեն անվանված «հաղորդակից»։ Հատկապես ուշադրության արժանի է Կարմիր բլուրում ուրարտական քաղաքի փլատակների մեջ տեղադրված վաղ հայկական դամբարաններից գտնված նման անոթների զունազարդ օրինակը։ Գառնիի պեղումները ցույց են տալիս, որ այդ անոթները գոյատևել են հելլենիստական դարաշրջանում ևս։

Առաջին իսկ հայացքից պարզ է դառնում այս անոթների ձևի հինարևելյան ծագումը։ Կարմիր փայլեցրած նման անոթներ մեծ թվով հանդիպում են ուրարտական խեցեղենում։ Այդ հանգամանքի վրա ուշադրություն է դարձրել դեռևս Լեման Հաուպտը։ Քիչ չեն այդ անոթները նաև Կարմիր բլուրում։

---

36 Г. А. Тирацян. Древнеармянская керамика из раскопок Армавира. «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1, էջ 221։

37 А. А. Мартиросян. Նշվ. աշխ., նկ. 22, 24а։

Հայաստանի ետուրարտական, վաղ հայկական խեցեղենի բնորոշ ձևերից մեկը կարելի է համարել երկկանթանի (նարնջագույն անգոբով պատած) համեմատաբար բարձր սափորները։ Նման մի հաջող օրինակ գտնվել է Կարմիր բլուրի աքեմենյան ժամանակաշրջանի դամբարանադաշտից։ Բացառված չէ, որ անոթների այս տիպը ևս գոյատևել է մինչև հելլենիստական ժամանակաշրջանը, քիչ կերպարանափոխված։ Այս տիպի անոթները լայն տարածում ունեին աքեմենյան ժամանակաշրջանում և այդ է պատճառը, որ նրանց ծագումնաբանությունը հետաքրքրել է ուսումնասիրողներին։ Ցավոք, այդ կապակցությամբ հաշվի չի առնվել ուրարտական հարուստ նյութը։ Կարմիր բլուրի, Արինբերդի, Արգիշտիխինիլիի, Օշականի պեղումները մատնանշեցին այս ձևի լայն տարածումն Ուրարտուում։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուրարտական այս անոթներն ունեն իրենց նախորդները Փոքր Ասիայի և Իրանի խեցեգործության մեջ։ Խոսքը, սակայն, հատուկենտ օրինակների մասին է, որոնք չեն կարող նվազեցնել ուրարտական խեցեգործության դերը այս տիպի մշակման գործում։ Հավանական է, որ մարական ժամանակաշրջանի նորագյուտ օրինակների[38] (էլ չենք խոսում աքեմենյան և հայկական նյութի մասին) և ուրարտական վերոհիշյալ կավանոթների միջև տիպաբանական ուղղակի կապ կա։

Մետաղագործություն.— Հնագիտական նյութի ուսումնասիրությունը աստիճանաբար ընդլայնում է ուրարտական և հայկական մետաղագործական արտադրանքի միջև տիպաբանական նմանությունների շրջանակները (երկաթե կեռ դանակներ, օղակաձև դաստապանով երկաթե դանակներ, կենդանակերպ վերջավորություններ ունեցող ապարանջաններ, ձիու սպասքի զարդեղեն)[39]։ Սակայն շատ ավելի ուսանելի է ու կուլտուր-պատմական հետևություններով հղի վաղ հայկական գեղարվեստական մետաղագործության ուսումնասիրումը։ Այդ մետաղագործության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում եղջյուրաձև ռիտոնները (պտյակներ), որոնցից երեքը գտնվել են Արևմտյան Հայաստանում, երկուսը՝ Արինբերդի մերձակայքում[40]։ Դրանք պատրաստված են արծաթից (չորսը) և բրոնզից (մեկը)։ Արծաթե պտյակներից մեկը ոսկեզօծված է։ Պտյակների առաջամասերը պատկերում են անգրաղայուծ՝ այծի եղջյուրներով, եղնիկ, քարայծ, ձի, հեծյալ։ Նրանց ոճային և պատկերագրական կապերը աքեմենյան արվեստի հետ վաղուց են բացահայտված և այդ տեսակետից որոշված է նրանց տեղը աքեմենյան կայսերական արվեստի շրջանակներում։

Մինչև վերջերս այն կարծիքն էր իշխում, համաձայն որի ուրարտական նյութական մշակույթը ծանոթ չէ ռիտոնին որպես այդպիսին։ Ռիտոնների գոյության մասին միայն ակնարկում էին Սարգոն II-ի արձանագրության ավյալները Մուսասիրից տարված ավարի վերաբերյալ, ինչպես նաև մեկ-եր-

---

38 D. Stronach, Excavations at Tepe Nush-i-Jan, Iran, VII, 1964. էջ 16, նկ. 6, 7։

39 Ժ. Խաչատրյան, Հնագիտական հայտնագործություններ Գեղադիրում, էջ 90։ Ի. Կարապետյան. Նորաշենի վաղ հայկական ամրոցը, էջ 289։ А. О. Мнацаканян и Г. А. Тирацян, Новые данные о материальной культуре древней Армении, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1961, № 8, էջ 79։

40 Б. Н. Аракелян, Клад серебряных изделий из Эребуни, «Советская археология», 1971, № 1.

կու, իրենց վերջնական հաստատումը չգտած ենթադրություն։ Նման պայմաններում ինքնին հասկանալի է, որ Հայաստանի աքեմենյան ժամանակաշրջանի ռիտոնների ծագումնաբանությունը կարող էր լուծվել միայն աքեմենյան մշակույթի սահմաններում։

Գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում վերջին տարիներին գտնված ուրարտական եղջյուրագավաթները, որոնք այժմ անհերքելի ապացույց են Ուրարտուում անոթների այդ տիպի գոյության մասին։ Եղջյուրագավաթներից մեկը գտնվել է Արինբերդում և թռչնակերպ առաջամաս ունի[41], երկրորդը՝ Բաստամից է ու նրա առաջամասը ջեյրանի գլխի ձև ունի[42], երրորդը՝ Արգիշտիխինիլիից է, օձագլուխ առաջամասով։ Ուրարտական այս անոթները, թեկուզև կավից պատրաստված, կարող են մատչելի նախատիպեր համարվել Հայաստանում գտնված մ. թ. ա. V—IV դդ. ռիտոնների համար, մանավանդ որ նրանցից մի քանիսը դրսևորում են նաև ոճային առնչություններ ուրարտական արվեստի հետ։

Աքեմենյան Իրանի մայրաքաղաք Պերսեպոլիսի պալատական դլխավոր շենքերից մեկի՝ ապադանայի արևելյան և հյուսիսային մուտքերի երկու կողմում, պատերի վրա պատկերված են տերության երկրների պատվիրակությունները՝ արքայից արքային ընծաներ բերելիս։ Հայերի ձեռքին պատկերված է մի հոյակապ անոթ, բարձրադիր, երկկանթանի։ Անոթի մանրամասների, օրինակ՝ կանթերի կենդանակերպ վերջավորությունների վերարտադրությունը կասկած չի թողնում, որ այն պատրաստված է եղել մետաղից։ Նման անոթի արծաթե կենդանակերպ կանթեր են գտնվել Հայաստանում, իսկ ամբողջական անոթներ՝ աքեմենյան Իրանի բաղմաթիվ երկրներում։

Վերևում մենք տեսանք, որ այս տիպի երկկանթ անոթներ Հայաստանում պատրաստվում էին նաև կավից, ինչը խոսում է այս ձևի լայն տարածման ու կայունության մասին։ Մետաղե անոթների, ինչպես և կավե անոթների ծագումը նրանց բերում հասցնում է ուրարտական նախատիպերին, որոնց հետ ծանոթացանք խեցեղենի մասին խոսելիս։

Կավե ըմպանակների կողքին վաղ հայկական ժամանակաշրջանում հանդիպում են մետաղե՝ արծաթե ըմպանակներ, որոնք հայտնի են Արևմտյան Հայաստանի տարածքից, հավանաբար Էրզրումի շրջանից։ Նրանց ուրվագիծը քիչ է տարբերվում կավե ըմպանակներից, քանի որ ունեն կիսակլոր հատակ և ընդգծված անցում դեպի լայնացող պսակները։ Կավե ըմպանակների պես, մետաղե ըմպանակները ևս իրենց ճշգրիտ նախատիպերն ունեն ուրարտական նյութի մեջ։ Վաղ հայկական մետաղե ըմպանակների ծագումը հաստատող հետաքրքիր նմուշներ կան Կարմիր բլուրում, Արինբերդում և ուրարտական այլ հուշարձաններում։

Վաղ հայկական դեղարվեստական մետաղագործության մի փոքր, բայց բնորոշ խումբ են կազմում զարդարուն թասեր կամ պնակները, այսպես կոչված փիալաները։ Նրանց զարդերը պատրաստված են դրվագման եղանակով և պատկերում են ճառագայթաձև դասավորված լոտոսի պսակաթերթիկներ,

---

[41] Г. А. Тирацян, К вопросу о торевтике и ювелирном деле Армении в ахеменидское время, «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 1։

[42] W. Kleiss, Ein urartaisches Gazellenkopf Trinkgefass aus Bastam, „Archaeologische Mitteilungen aus Iran", Bd. VI, 1973, աղ. 17։

վերևի սուր ծայրերին՝ լոտոսի ձվաձև բողբոջներ և ծաղիկներ։ Արևմտյան Հայաստանում գտնված այս փիալաները բազմաթիվ զուգահեռներ ունեն Աքեմենյան Իրանի երկրներում։ Սակայն Կարմիր բլուրի մետաղի հավաքածուների հետ ծանոթանալիս կարելի է տեսնել ուրարտական թասեր նույնանման զարգերով, զարդերի նույնպիսի դասավորությամբ, մի հանգամանք, որը չի կարելի զանց առնել վաղ հայկական վերոհիշյալ անոթների ծագումը ուսումնասիրելիս։

Արմավիրում պեղումների ժամանակ գտնվել է ոսկե մահիկաձև կրծքազարդ, ընդելուզված կիսաթանկագին տարբեր գույների քարերով։ Կրծքազարդը ամենայն հավանականությամբ թվագրվում է աքեմենյան ժամանակաշրջանով։ Այսօր ոչ մի կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ կրծքազարդը, այն էլ նույն ձևի, ինչ որ Արմավիրում գտնվածը, լայն տարածում է ունեցել Ուրարտուում։ Այդ մասին են վկայում կրծքազարդերի գյուտերը՝ մեկը Արինբերդի մոտից, երկուսը՝ Արևմտյան Հայաստանից[43], ինչպես և նրանց փորագրված պատկերները ուրարտական արձանիկների վրա։

Քարե անոթներ.— Հայաստանի հելլենիստական դարաշրջանի հուշարձաններում, առավելապես Արմավիրում, հանդիպում են քարե սկահակների բազմաթիվ բեկորներ։ Ամբողջական օրինակներ՝ պորֆիրիտից կամ կոնգլոմերատից, հայտնի են Դեղադիրի վաղ հելլենիստական դամբարաններից և Լեռնային Ղարաբաղից։ Քարե այս անոթները հիշեցնում են համեմատաբար բարձր ոտքի վրա կանգնած ոչ խոր թասեր։ Նման սկահակներ, մեծ մասամբ կավից, հայտնի են Առաջավոր Ասիայի տարբեր վայրերից, բայց ամենահամոզիչ նախատիպերը կարելի է գտնել ուրարտական նյութերի մեջ։ Կարմիր փայլեցրած կավե սկահակ հայտնաբերվել է Մեծամորում[44], ուրարտական դամբարանի մեջ, որ ակնհայտորեն խոսում է Հայկական լեռնաշխարհում այս ձևերի ուրարտական ծագման օգտին։

* * *

Ուրարտա-հայկական մշակութային առնչությունների ծավալը, նրանց բազմաբնույթ էությունը, ոչ թե սոսկ ազդեցությունների արտահայտություն է, այլ անհամեմատ ավելի կարևոր, ծանրակշիռ մի երևույթի արգասիք։ Վերևում հիշատակված ուրարտա-հայկական զուգադիպությունները կասկած չեն թողնում, որ խոսքը մշակութային երևույթների յուրացման ու նրանց օրգանապես միաձուլման մասին է։

Կուզենայինք այս կապակցությամբ անդրադառնալ մի երկու առանձնահատկության, որոնք կօգնեն ավելի լավ բացահայտելու պատմական իրողությունը։

Հետաքրքրությունից զուրկ չէ այն հանգամանքը, որ մի մշակույթից մյուսը փոխանցվող երևույթները հաճախ արտացոլում են ոչ թե նյութական մշակույթի առանձին, իրարից մեկուսացած ճյուղեր, այլ օրգանապես միմյանց հետ կապված, ազգակից մի շարք բնագավառներ (քաղաքաշինություն—ճար-

---

43 O. A. Taşyurek, Urartian Jewelry and Needles in the Adana regional museum, „Türk Arkeoloji Dergisi Sayi", XXII, 2, 1975, նկ. 1։

44 Է. Խանզադյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան, Մեծամոր, Երևան, 1973. աղյուսակ XLII, 1։

տարապետություն—շինարարական տեխնիկա կամ՝ խեցեգործություն—մետաղագործություն), որով զգալի չափով վերանում է փոխառությունների պատահականության հավանականությունը։

Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ ժառանգորդությունը հաստատվում է ոչ միայն մշակույթի տարբեր ճյուղերում, այլ եթե կարելի է այսպես ասել, նաև նրա հիմնական սոցիալական բնույթի դրսևորումներում։ Եթե քաղաքաշինության, պալատական ու տաճարային ճարտարապետության, դեղարվեստական մետաղագործության հետ կապված երևույթները արտացոլում են հասարակության վերնախավային մշակույթը, ապա խեցեգործությունը, թաղման ձևերը, գյուղական ճարտարապետության օրինակները սերտորեն առնչվում են ժողովրդական զանգվածների մշակույթին, մի իրողություն, որ չի կարող չվկայել մշակութային հաջորդականության պրոցեսի լայն ընդգրկման մասին։ Այդ ամենևին չի նշանակում, բնականաբար, թե ուրարտական մշակույթը յուրացվել է ամբողջությամբ, բայց այն, ինչ անցել է հայերին, ինքնին բավական է բնութագրելու համար ժառանգորդության երևույթը, որը կապված է միևնույն աշխարհագրական տարածքում զարգացող մշակույթների հաջորդականության և հատկապես ուրարտական էթնիկական զանգվածի՝ հայ ժողովրդի կազմի մեջ ձուլվելու իրողության հետ։ Հոդվածի մեջ բերված հնագիտական նյութը, նշված տիպաբանական առնչությունները հաստատում են այս իրողության ճշմարտացիությունը։

Այս տեսակետից հետաքրքիր է պարզել, թե ի՞նչ ձևով, ի՞նչ ճանապարհներով է ուրարտական մշակույթի այս կամ այն երևույթը հասել հայերին, հետաքրքիր է հասկանալ այդ փոխանցման մեխանիկան։ Այստեղ արդեն անխուսափելիորեն առաջ են գալիս ընդհանուր պատմական, տնտեսական ու էթնիկական տարբեր հարցեր։ Վաղ հայկական դեղարվեստական մետաղագործության ակնհայտ ազգակցությունը ուրարտականի հետ թույլ է տվել հանգելու այն հետևությանը, որ վաղ հայկական ժամանակաշրջանում շարունակվել է ուրարտական մետաղագործական մի շարք արհեստանոցների գործունեությունը։ Այս երևույթի նշանակությունը, ինքնին հասկանալի է, դուրս է գալիս մշակույթի պատմության շրջանակներից։ Նման արհեստանոցների գոյությունը նշանակություն ունի հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքը ճիշտ գնահատելու տեսակետից, բայց առաջ է մղում կարևոր հարցեր նաև էթնիկական պատմության համար։ Ովքե՞ր էին աշխատում այդ արհեստանոցներում՝ հայե՞ր, թե՞ ուրարտացիներ։ Նույն հարցը ծագում է նաև վաղ հայկական խեցեգործությունը ուսումնասիրելիս։ Վաղ հայկական և ուրարտական կավանոթների նմանությունը այնքան ակնառու է, որ դուցե ուրարտացի վարպետներ էին սպասարկում վաղ հայկական բրուտագործի վառարանները։

Ուրարտուի և Հայաստանի նյութական մշակույթի երևույթների զարմանալի նույնությունը չի կարելի բացատրել լոկ ավանդույթների կենսունակությամբ կամ հարատևությամբ։ Այդ ավանդույթները կոնկրետ, կենդանի կրողներ են ունեցել։ Ուրարտուի անկումից հետո, սկզբնական շրջանում, նման երևույթը բացատրվում է, հավանաբար, Հայաստանի արտադրական կենտրոններում ուրարտացի վարպետների ներկայությամբ, որոնց մի մասը պետք է գտնվեր քաղաքներում կամ քաղաքատիպ բնակավայրերում։ Բացառված չէ,

հետևաբար, այդ վայրերում ուրարտական էթնիկական տարրի առկայությունը։ Նման պայմաններում իր հաստատումն է գտնում նաև Հերոդոտի հանրահայտ վկայությունը մ. թ. ա. V դարում Հայաստանում ուրարտացիների գոյության մասին։

Այնուհետև, եթե կապ կա ուրարտական և Հայաստանի հելլենիստական դարաշրջանի մշակույթների միջև,— իսկ այդպիսին, ինչպես տեսանք կա,— դա հաստատվել է նաև շնորհիվ արտագրական այն գործունեության (թեև համեստ բնույթի), որ ծավալվել է Հայաստանում միջանկյալ՝ վաղ հայկական ժամանակաշրջանում։ Ահա թե ինչ հետևության կարելի է հանգել տիպաբանական զուգադիպությունների հիման վրա։ Այս պրոցեսի ընթացքում ուրարտական նյութական մշակույթին հատուկ երևույթները, փոփոխված կամ անփոփոխ, անցել են ավելի ուշ ժամանակաշրջանները։ Այստեղ արդեն իրեն դրսևորել է ավանդույթի ուժը։

Ժառանգորդության երևույթը ճիշտ հասկանալու համար պետք է հաշվի առնել հնագիտական պեղումների հետ անմիջականորեն կապված մի հանգամանք ևս։ Խոսքը Արմավիրի հնագիտական ուսումնասիրությունից բխող մի քանի առանձնահատկությունների մասին է։ Առաջին անգամ չէ, որ շեշտվում է այն հանգամանքը, որ Արմավիրը Հայկական լեռնաշխարհի այն հազվագյուտ հուշարձաններից է, որտեղ ուրարտական շերտի վրա նստած է քիչ թե շատ լավ պահպանված հայկական հելլենիստական մշակույթի շերտը։ Այդ շերտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այստեղ հայկական հելլենիստական մշակույթը բառիս բուն իմաստով ձևավորվել է ուրարտական միջավայրում։ Արմավիրում հաստատված Երվանդունիների օրոք դեռևս կանգուն էին ուրարտական ամրոցի պարիսպները, պալատական շենքերը, տաճարը, մերձտաճարային համալիրը, բնակելի շենքերից մի քանիսը։ Ինչպես ցույց են տալիս հնագիտական պեղումները, այս ամենը օգտագործվել է որոշ վերափոխումներ կատարելուց հետո կամ նույնիսկ առանց վերափոխության։ Վաղ հայկական ժամանակաշրջանի արհեստավորների ջանքերով հելլենիստական ժամանակաշրջանին են փոխանցվել ուրարտական նյութական մշակույթի առանձին ճյուղերի, մետաղագործության, խեցեգործության, քարագործության ստեղծագործական ավանդներն ու տիպաբանական առանձնահատկությունները։ Այս էլ ուրարտա-հայկական մշակութային ժառանգորդության, ժառանգորդական կապերի դրսևորման մի ձև է, որը իրագործվել է Արմավիրում և նրան նման հուշարձաններում։

Ուրարտուի նշանակությունը չի սպառվում հին հայկական մշակույթի ձևավորման գործում նրա խաղացած դերով։ Դուրս գալով Հայկական լեռնաշխարհի սահմաններից, այն ընդգրկել է բազմաթիվ երկրներ ու ժողովուրդներ։ Աքեմենյան Իրանի, հին Փռյուգիայի, Հունաստանի, հեռավոր Իտալիայի ու տափաստանային Սկյութիայի կողքին այժմ հիշատակվում են էգեյականի կղզիները, Թրակիան, Վիրքը, Հյուսիսային Կովկասը, անգամ Ասորեստանը, որոնք այս կամ այն ձևով առնչվել են Ուրարտուի մշակույթին և ավելի կամ պակաս չափով զգացել նրա ազդեցությունը։

Եվ այնուամենայնիվ, ինչպես փորձեցինք ցույց տալ վերևում, ոչ մի մշակույթ չի արգասավորվել ուրարտական քաղաքակրթության նվաճումներով այն չափով, որքանով հին հայկական մշակույթը։

УРАРТУ И АРМЕНИЯ

(К вопросу о преемственности материальной культуры)

Г. А. ТИРАЦЯН

(Резюме)

В свете новых данных, полученных при исследовании урартских и древнеармянских памятников, особое значение приобретает вопрос о преемственных связях урартской и сменившей ее армянской культуры. Представляется возможным проследить преемственность в целом ряде отраслей культуры: в градостроительстве, архитектуре, строительном деле, в типах захоронений, одежде, керамике, металлургии. Культурные контакты существовали также между Урарту и страной Коммагеной, впоследствии связанной с соседней Арменией разносторонними узами. Приведенные урарто-армянские сопоставления позволяют говорить об освоении урартских культурных явлений и их органической ассимиляции армянами, что свидетельствует прежде всего о вовлечении урартского этнического массива в процесс образования армянского народа.